

ԽՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՒՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆԿԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՅԻՆ ՆԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Նայ աստվածաբանական մարեմագրության պարմության մեջ զգալի է խորհրդապաշար աստվածաբան, վանական ճգնակյաց Եւագր Պոնտացու երկերի ազդեցությունը, որոնք կենցաղավարել են հայ իրականության մեջ դարեր ի վեր: Մաշտոցի անվան Մարենադարանի ձեռագրերում, մեծանուն հայերի, մարենագիրների և փիլիսոփաների՝ Գրիգոր Լուսավորչի, Գրիգոր Տաթևացու, Գրիգոր Նյուսացու, Բարսեղ Կեսարացու, Դիմիտրիոս Արիստակեսի և բազում այլ երախտավորների խրատների, ճառերի և վարդապետական աշխատությունների կողքին քաղաքացիական դարերում իրենց ուրույն արդիւնքներ են գրադրեցնում Եւագրի Վարքը, նրա «ոգեշահ» խրատները, աստվածաբանական-փիլիսոփայական երկերը՝ իրենց մեկնություններով և լուծումներով: «Խորհրդապաշարական ոգին, ճգնակեցական իրենց հորդորները Եւագրի ժառանգությունն առանձնապես սիրելի են դարձրել վանական միջավայրում: Ինչպես երևում է, դրանք ընգրկված են եղել վարդապետարանների ուսումնական ծրագրում»¹²: Նայ մարեմագրության մեջ պահպանվել են նրա երկերը, երկերի մեկնությունները, այդ թվում այնպիսի գործեր, որոնք բնագրով ամբողջությամբ մեզ չեն հասել: Եւագր Պոնտացին մեծ դեր է խաղացել քրիստոնեական վարդապետության, վանականության գաղափարախոսության ձևավորման գործում: Եւագրի նմանօրինակ ճանաչումը հայոց մեջ պայմանավորված է նաև այն փաստով, որ նա այն հեղինակներից մեկն էր, որի դավանաբանական արժեքները համընկնում էին Նայ Եկեղեցու դավանանքի հետ, և վերջինիս ամրապնդման ու զարգացման համար օգտագործվել են նաև Եւագրի երկերը: Սույն հոդվածի նպատակն է փոքր ակնարկով ներկայացնել Եւագր Պոնտացու երկերը հայ մարեմագրության մեջ:

Եւագրի երկերը հայերեն են թարգմանվել դեռևս հինգերորդ դարում:

«Անապարի իմաստուն» Եւագրի երկերն ունեն խորհրդապաշարական ուղղվածություն և կոչ են քրիստոնյայի համար հոգևոր առաքիլությունների, ամենօրյա աղոթքների, հոգու նյութազերծման միջոցով կարարելագործման և Աստվածությանը հաղորդակցվելու:

Միջնադարում մեծ դեր են խաղացել Աստվածաշնչի («Սուրբ գրեանց»), կրոնական ու աստվածաբանական երկերի («նուրբ գրեանց»), փիլիսոփայական գործերի մեկնությունները: «Գրականության նման բաժանման առաջին անգամ հանդիպում ենք Գրիգոր Աբասյանի կազմած «Գիրք պարճառաց» երկում՝ «Նուրբ գրեանց» բաժնում, որտեղ ի թիվս Փիլոն Եբրայեցու, Գրիգոր Նազիազանցու, Գրիգոր Նյուսացու, Բարսեղ Կեսարացու, Դավիթ Փի-

1 Ն. Քյոսեյան, Եկեղեցու հայեր, վարդապետներ, (4-8րդ դդ.), Եր., 2007, էջ 161:

լիստփայի գործերի, Դիմիսիոս Արիսպագացու ինքնակենսագրության, րեղ են գրել նաև Եւագր Պոնրացու 4 ճառերը»²: «Նուրբ գրեանքը» փիլիսոփայական-աստվածաբանական երկերն էին, որոնք օգնում էին եկեղեցու հայերին բացատրելու քրիստոնեական վարդապետությունը: «Փիլիսոփայական ու քրիստոնեական տարրերը գերակշռող են եղել հայկական աղբյուրներում, հայերը սերտ կապ են ունեցել արեւելյան մյուս եկեղեցիների հետ և այդ համակարգի մասն էին կազմում: Նայերը հարկադրված էին խորանալու փիլիսոփայական խնդիրներում՝ իրենց հին ավանդական դավանաբանական հիմքերի վրա մնալու, այսինքն՝ Նոմի ու Կոստանդնուպոլսի եկեղեցիներից անկախ լինելու համար: Այն մասին, որ Նայաստանում րեղյակ էին դավանաբանական և փիլիսոփայական նրբություններին, վկայում են նաև հետագա աղբյուրներում արտացոլված եզրերը»³:

Մաշտոցի անվ. մատենադարանում պահվում են Եւագր Պոնրացու կյանքը և մատենագրությունը բովանդակող ձեռագրեր, որոնց թիվը հասնում է 56-ի: Եւագրյան թարգմանությունները ներկայացված են «Սրբոյ Խորն Եւագրի Պոնրացոյ վարք և մատենագրութիւնք թարգմանեալք ի յունէ ի հայ բարբառ ի հինգերորդ դարու՝ աշխատասիրութեամբ և ծանօթութեամբք ի յոյս ընծայեաց Բարսեղ վ. Սարգիսեան» (Վենետիկ, 1907) աշխատության մեջ: Բ. Սարգսյանն ուսումնասիրել է Եւագրի կյանքը, պարզել, թե ինչքա՞ն գործեր ունի նա ընդհանրապէս, դրանցից որո՞նք են մեզ հասել, ի՞նչ ազդեցություն է ունեցել Եւագրը հայ հին և միջնադարյան գրականության մեջ և ինչպիսի արդյունքներ կան, ովքեր են Եւագրյան հայերեն ծանոթ գրչագիրները, քանի՞ խմբի են բաժանվում, և ումից է նա օգտվել վերոհիշյալ աշխատությունը գրելիս:

Ընդհանուր ակնարկով փորձենք ներկայացնել Եւագրի ազդեցությունը հայ մատենագրության մեջ, որի համար նախնառաջ պէտք է անդրադառնալ Բ. Սարգիսեանի աշխատասիրության «Եւագրի ազդեցութիւնը հայկական եկեղեցոյ և գրականութան վրայ» ենթաբաժնին: Այսպէղ հեղինակը անդրադառնում է հայ մատենագրության սկզբնավորումից մինչև 18-րդ դարն ընկած ժամանակահատվածին:

Ըստ այդմ Եւագրից հայ մատենագրության մեջ ազդվել են, վկայակոչել կամ մեկնություններ են հեղինակել հետևյալ հայ մատենագիրները՝ Սահակ Պարթևը (Պրոկլին ուղղված նամակում), Եզնիկ Կողբացին իր խրատներում, Նովիանոս Մանդակունին՝ «Վասն պրոքոց և պարարագաց», «Վասն րեսչութեան քահանայից», «Վասն հմայից դիթական» երկերում, Անանիա Շիրակացին, Գրիգոր Նարեկացին, Սարկավագ Վարդապետը, Գրիգոր Իմաստասեր Մարաշեցին («Վայք ողբոց»), Կիրակոս Երզնկացին, Մաթթեոս Ջուղայեցին, Մխիթար Երզնկացին և այլ մատենագիրներ: Փորձենք համառոտ ներկայացնել մի քանիսը:

Նայ միջնադարյան մատենագրության մեջ կարևոր րեղ են զբաղեցնում «Վկայութիւնք» ժողովածուները, որոնք ամփոփում են ասույթներ և խմաստախոսություններ և կիրառվել են քարոզներում: 17-18-րդ դարի հայ հեղինակ Ալեքսանդր Ջուղայեցին թողել է հարուստ մատենագրական ժառանգություն, որպէղ իր ուրույն րեղն է զբաղեցնում «Վկայութիւնք պիտանիք և հարկաւորք ի պարտաստ գոյ ի ձեռս խնդրողաց Բանի, եթէ ի պէտս

2 Ն. Անասեան Նայկական մատենագիտություն, հատոր Ա, Եր., 1959, էջ 14:

3 Մ. Շիրինյան, Զրիստոնեական վարդապետության անրիկ և հեղինիստական տարրերը, Եր., 2005, էջ 68:

քարոզության և թե ի պէս վիճաբանության մանաւանդ ի պէս գիտության» խորագրով ժողովածուն: Ն. Քյոսեյանի աշխատանքությամբ հրատարակվել է «Ասույթներ քարոզչության համար» աշխատությունը, որտեղ կա նաև աշխարհաբար թարգմանություն: «Վկայություն»-ի մեջ տեղ են գտել քաղվածքներ Աստվածաշնչից, աստվածաշնչական պարականոններից, եկեղեցու հայրերի ժառանգությունից, անտիկ մրաժողների իմաստաստություններից, ինչպես նաև Եւագր Պոնուրացու վաստակից: Ասույթներն իրենց բովանդակությամբ ունեն բարոյաբանական, խորհրդապաշարական, դավանական, կանոնական բնույթ: Ահա դրանցից մի քանիսը.⁴

«Ի հեղուկներն են ծնանի գիտնականությունն և յանդգնությունն՝ արգիւթիւն»:

«Առանց գիտության ոչ բարձրանայ միայն մարդոյ երկինս, որպէս և ծառ, որ ոչ ծաղկի առանց ջրոյ»:

«Գիտնականն ու արդիւնականն պարահեցան միմեանց, և ի միջի նոցա կայր Աստուած»⁴:

Մարթնոս վարդապետը հեղինակել է «Յաղագս ութ խորհրդոց մեղաց» երկի մեկնությունը: Բարսեղ Մարգիսեանը նրան համարում է «հաւանօրէն ծնողեամբ Երզնկացի», սակայն խոսքը վերաբերում է Մարթնոս Զուղայեցուն: Մարթնոս Զուղայեցու «Լուծմունքը» մեզ է հասել ոչ միայն ձեռագիր վիճակում, այլ նաև հրատարակված: Եւագր Պոնուրացու «Յաղագս ութ խորհրդոց մեղաց» երկը հայ մատենագրության մեջ հայտնի է երեք մեկնություններով՝ Մարթնոս Զուղայեցու, Կիրակոս Երզնկացու և Գրիգոր Մեկնիչի: Զուղայեցին բնութայն է առնում յուրաքանչյուր «չար խորհուրդ»՝ արծաթասիրություն, արքայություն, բարկություն, հպարտություն և այլն, դրա առաջացման պարճառները և դրանից ազատման ուղիները: Այսպես, օրինակ, խոսելով ամբարշտականություն կոչված մեղքի մասին՝ ասում է, թե ամբարշտական մարդը նման է անպարտ ծառի, որը վերել բարձրանալով ոչ ոքի պէտք չէ, քանի որ նա առաքիլությունից է զուրկ⁵:

«Նարիւրաւորք վեցերորդք»-ը Եւագրի երկերից ամենանշանավորն է, քանի որ այն կրճատաստվածաբանական, իմաստասիրական, բարոյական, կարարածախտական լուծմունքով մի աշխատություն է: «Նարիւրաւորք վեցերորդք»-ը՝ «Յաղագս ընդդէմ բանաստեղծիցն արարաբնոց» կամ «Գոտսրիկյան գլուխները» վեց հարյուր գլուխներից է բաղկացած, որոնցում քննարկվում են դավանաբանական և ճգնակեցական փարբեր հարցեր: Այն հայտնի է եղել միայն ասորական թարգմանությամբ, իսկ հայ մատենագրության մեջ պահպանվել է երկի ամբողջական թարգմանությունը ասորերենից: Երկի լուծմունքի հեղինակն է 13-14-րդ դդ. հայ իմաստասեր, մատենագիր, մեկնիչ, բանաստեղծ, մանկավարժ, եկեղեցական գործիչ Կիրակոս Երզնկացին: Երզնկացին յուրովի նուրբ և խորաթափանց աստվածաբանական մտակառուցումներով և ազգայն գաղափարների վրա նոր լույս է սփռում և այդ լույսի ներքո մեզ հնարավորություն է տալիս բացահայտելու Պոնուրացու ինքնամաքման, մեղքերից զերծ մնալու, հոգեւոր կարարեղագործման և աստվածային լույսի հետ հա-

4 Աղեքսանդր Զուղայեցի, Վկայությունք ի պէս քարոզութեանց, աշխատասիր. Ն. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 1998, էջ 152:

5 «Գիրք Ութ խորհրդոց մեղաց՝ արարեալ սրբոյ հօրն Եւագրեայ և հաւաքեալ ի մի յօգնաշան երկամբ Մարթնոսի վարդապետի», Կ. Պոլիս, 1750, էջ 139:

դորդակցման դժվարին, բայց յուրաքանչյուր քրիստոնյայի հոգուն հարազատ է անհրաժեշտ ուղին: Այս լուծմունքը նույնպես իր հերթին «Նուրբ գրեանք»-ի շարքին է պարկանում, որը մինչև օրս դեռ ձեռագիր վիճակում է և ուսումնասիրության կարող է:

Եւագր Պոնտացոյ «Նարիւրատրք»-ը բազմաթիվ բանասիրական և վարդապետական վեճերի փառք է փակել: Բնագիրն ամբողջությամբ չի պահպանվել: Երկի մի քանի բեկորներ վերագրվել են Մաքսիմոս Խոստովանողին, սակայն 20-րդ դարում ուսումնասիրողների ջանքերով (Եպիփանովիչ, Նատսիերր, Ֆրանկենբերգ) ապացուցվել է նրա հեղինակային պարկանելությունը: Նայրնի են այս աշխատության հայերեն, ասորերեն և վրացերեն թարգմանությունները, ընդ որում հայերեն թարգմանությունը հրատարակվել է Բարսեղ Սարգիսյանի կողմից, համընկնում է ասորականին (7-րդ դարի նեստորական հեղինակ Մեծ Բարայի անունով): Ներագայում երևան եկած ասորական էս մի թարգմանություն (ավելի ճիշտ՝ խմբագրություն) իրարամերժ կարծիքներ առաջ բերեց, սակայն Ա. Գիյոմոնը այն եզրակացության հանգեց, որ առաջին ասորական խմբագրությունը (որը պայմանականորեն կոչվեց «Լրացում») առանձին սրբազորություն է՝ ասորական ավանդության մեջ հայրնի «Գլուխներ փռնիքի մասին» անունով:

Երկում հիմնականում շեշտը դրվում է հեյրեյալ հարցերին. Ս. Երրորդության վարդապետություն, չարի քրիստոնեական ըմբռնում, ազատ կամք և մեղք, վերջին դափաստան ու փրկագործություն, Աստվածաճանաչողություն և Աստվածությանը հաղորդակցում: Լուծմունքում ներկայացված են նաև հոգու, մարմնի և մարքի վերաբերյալ խորհրդապաշտական հայացքներ: Միտքն անմարմին է, երբ նմանվում է Աստծուն գիտությամբ, բարությամբ և կարողությամբ: Մարմնի գործությունը հենց հոգին և միտքն են, որ ներգործելով՝ մարմնին կենդանություն են փախա և բնությամբ իրար յծակից են ամեն գործում: «Եւ յամենայն ի սպոյ և ի պալարէ ազատ է միտք՝ որ միշտ յԱստուած հայի»⁶: Միտքը Աստծուն հայելուց է միայն, որ Նրա նման անմեղ է լինում: Երգնկացին այսպեղ գեղեցիկ համեմատություն է անում. ինչպես պայծառ հայելին, երբ արեգակի դեմ ես կանգնեցնում, արեգակն իր ողջ բոլորակությամբ հայելու մեջ է արտացոլվում (հայելին իր մեջ է ընդունում), այնպես էլ միտքը, երբ Աստծուն է հայում, մաքրագործվելով, Նրան է նմանվում, մարդն ամբողջովին աստվածանում է: «Որ յամենայն ահատր կրիցն միտքն ազատ լինի, յայնժամ պայծառանայ միտքն որպէս զարեգակն»⁷: Հոգին եռամասնյա է՝ բան (բանական մաս), ցասում, ցանկություն: Այս գաղափարի արմարները ավելի խորն են. «Այլ եռամասնեայ անձինն առնելով ըստ Պապունի բանականին առաքինություն խոհեմություն է. իսկ ցասմնապետական՝ հեզությունն է, և արիություն. իսկ ցանգականին՝ ողջախոհություն և ժուժկալություն. և բոլոր անձինն՝ արդարություն և ազատականություն և մեծահոգություն. իսկ չարություն է բանականին՝ անզգամություն»⁸: «Նարիւրատրք»-ի մեջ եւս այս գաղափարներն են արծարծվում: Երբ հոգու երեք մասերը՝ բանականը, ցասմնականը և ցանկականը իրենց առաքինությամբ զարդարվեն,

6 «Սրբոյ Խորն Եւագրի Պոնտացոյ վարք և մարենագրութիւնք» թարգմանեալք ի յունէ ի հայ բարբառ ի հինգերորդ դարո՝ աշխարասիրությամբ և ծանօթութեամբք ի լոյս ընծայեաց Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1907, էջ 152:

7 «Եւագրեայ Նարիւրատրք վեցերորդք», ՄՄ ձեռ. 518 (1635թ.), թ. 29ա:

8 «Մարենագրութիւնք նախնեաց. Կորյուն. Մամբէ. Դալիթ», Վրիստոփելի «Յաղագս առաքինութեանց առ Աղեքսանդիրոս թագաւոր», Վենետիկ, Ս. Ղազար, 1833, էջ 629:

այն ժամանակ միայն ամբողջովին իմաստուն, արի, ողջախոհ և արդար կլինի: Բանականի հիվանդությունը խորամանկության առավել և անզգամության պակաս լինելն է, երկրորդինը՝ երկչությունը և հանդգնությունը, իսկ ցանկականինը՝ զեխությունը և շռայլությունը: Նոգու «առողջությունը» բանականի խոհական, ցասման՝ արի և ցանկականի ողջախոհ լինելն է: Եւ սրանով է մարդն արժանանում գիտության (ճանաչողության): Բանական միայն կրում է գիտություն, այսինքն՝ գիտությունը բանականի առաքինությունն է, իսկ անգիտությունը՝ նրա չարությունը: «Գործ է գիտութեան բնական որ զերբորոշիւնն գիտնայ, ոչ զհարդն, այլ թէ ի վեր է քան զհաստմն, որպէս և գրեալ է. Իմաստութեան նորա չափ ոչ գոյ»⁹: Արդարեւ լույսի ճանապարհով են ընթանում, իսկ անմիայնեքը՝ խավարի: Մակայն Տերը ոչ թե փրկում է վերջիններին, այլ ժամանակ է փալիս ապաշխարելու և դեպի ճշմարիտ գիտություն գալու: Աստված ողորմած է, և նրա ողորմությամբ է մարդն արժանանում շնորհի, և այդ շնորհով սրելով են արարածները: Բանականների գիտության սնունդով, այսինքն՝ աշխարհաճանաչողությամբ աշխարհը փոփոխվում է: Ինչպես որ փունկն է ջրով սնվում, այդպես բանական արարածները՝ իմաստությամբ: Քանի որ Տերը մարդկանց ապրեցնում է ոչ միայն «հացի», այլ նաև «բանի», որ Աստված է գալիս: Ինչպես զգեստն է մարմնի մերկությունը ծածկում, այնպես էլ՝ առաքինությունը հոգու:

Եւագր Պոնտագու «Նարիւրաւորք վեցերորդ»-ից ներշնչվել է Գրիգոր Նարեկացին: «Բոլոր մարդկային խորհուրդները, կրքերը, ներգործություններն ու վարդապետականները, գործեր Եւագր յունական նրբամտութեամբ իմաստասիրած է իր «Ընդդէմ պարասխանի առ դուսն» և Վեցհարիւրակներին մէջ, նոյնը արթուն և զուարթունը Գրիգոր՝ բանաստեղծութեն խորացուցեր է - իր փեսային մէջ եզական - աստուածային Ողբերգութեան մէջ, իբր խնկակնոց սրբին, և Բան Զ.ի երրորդ և չորրորդ պարբերությունները՝ այդ ամենուն այլաբանական ուրուագիծը կը ներկայացնեն մեզ՝ ըստ հոգեբանական Գրիգորի, գոր կը բարգաւաճէ ամբողջ գրքին մէջ»¹⁰: Երկու խորհրդապաշար հեղինակներն էլ գտնում են, որ հոգին եռամասնյա է.

Զարացո զշնորհիդ փայլումն ի գեղ դիմացս և ի կերպարան
 փեսութեան մարացս հողեղենիս
 Յարմար յերիւմամբ կացո յարդարեալ, որ գթոյդ բերէ նկատումն՝
 նշողագարդ մաքրութեամբ զպեալ գմայլս մեղաւորիս,
 Աստուածային կենդանի, անկեղծ, երկնաւոր լուսով քո ծածկեալ
 յարիւնակս երիս¹¹: (Բան Խ, գ)

«Մարյան»-ում մաքրագործման ուղի անցնելու և հոգում անփոփոխ կերպով Տիրոջ պարկերը նկարելու Նարեկացու կոչը հիշեցնում է «Նարիւրաւորք»-ում Եւագրի աստվածաբանության հիմնական գաղափարները՝ մարդն Աստծո պարկերն է, խորհրդապաշարի ուղին պարբ է ողեկցվի աշխարհուրացումով և հոգու նյութագերծման միջոցով կարարելագործմամբ, որը փրկում է Աստվածության հեղափոխական կազմակերպություն:

Եւագրը, որին կոչում էին «միս և զարդ անապարի», իր «Յաղագս աղօթից» երկում

9 «Եւագրեայ հարիւրաւորք վեցերորդ», Լուծմունք Կիրակոս Երզնկացու ՄՄ ձեռ.1980, թ. 60բ:

10 Ն. Բ. Մարգիսեան, նշվ. աշխ., էջ ԸԿԱ:

11 Գրիգոր Նարեկացի, Մարյան Ողբերգության, աշխատասիրությամբ՝ Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Եր., 1985, էջ 409:

փորձում է փալ աղոթքի՝ որպես հոգևոր կյանքի բարձրագույն պահի մեկնաբանությունը: Աղոթքի մեկնության վերաբերյալ նա ուրույն մոտեցում ունի. այն չափազանց հեղափոխական է և ամբողջությամբ ներթափանցված խորհրդապաշտական աշխարհայեցողությամբ և ճգնակեցական կենսակերպի արտացոլումով: Ն. Թամրազյանը Անանիա Նարեկացու փեսական աղբյուրներից է համարում նաև Եւագր Պոնտացուն: Աղոթքը որպես Աստծո հետ զրույց ենթադրում է հրաժարում կեցության նյութական-զգայական կողմից (այն բարձր է բնական իմաստասիրությունից), մարդկային ցանկացած մեղավոր մարքերից ազատում և ծայրահեղ մաքրամաքուր վիճակ: Նոգևոր աղոթքը սնունդ է մարքի համար: Աղոթքը մարքի համբարձվելն է երկրային իրողություններից առ Աստված: Պերք է աղոթել ինքնամոռաց և ջանասիրաբար: Աղոթքը հեզության և բարեմտության ընձյուղ է, ուրախության և երախտագիտության պարուղ, փխրությունից և ձանձրության պաշտպանվելու միջոց: Նա կոչ է անում աղոթել արքայապետով: «Նախնադատ աղոթի՛ր արքայապետի շնորհի համար: Օգտագործի՛ր արքայապետը ապաշխարության համար»¹²: Աստվածաբան-իմաստասեր Անանիա Նարեկացու երկերում իրենց արտացոլումն են գտել Պոնտացու այս խորհրդապաշտական հայացքները: Անանիա Նարեկացին իր Խրատներում՝ «Վասն համբերության և խաղաղության», «Վասն խոնարհության», «Վասն քահանայական կարգի», ինչպես Եւագրի երկերում, քննության է առնում Աստվածացման գաղափարը, որն ուղեկցվում է ներքին աղոթքով: «Զկարգեալ աղօթին հասարակաց գրուրնջեան և զգիշերոյ բնաւ մի անպես առնէր: Զքո սահմանեալ առանձնական կարգն անխափան կարարեա գաղօթից և զպահոց»¹⁴: Նարեկացու «Յաղագս գղջման և արքայապետաց» երկում կոչ է արվում ճգնել պահքով, ջերմեռանդ արքայապետով և անդադար աղոթքով, քանի որ արքայապետը հաշտեցնում է մարդուն Աստծո հետ¹³:

Միջնադարյան հայ մարտնչագիրները՝ Նովիանոս Երզնկացին, Վարդան Արևելցին, Վարդան Այգեկցին, Նովիանոս Գառնեցին, հաճախակի են կարարել քաղվածքներ Եւագրի երկերից: 13-րդ դարի հայ աստվածաբան Վարդան Արևելցին իր «Ճառերում» վկայաբերում է փարբեր հարվածներ Եւագրի երկերից: Նա, Աստծո բնության մասին խոսելով, վկայակոչում է Եւագրի այն միտքը, որ Աստված մեկ ու միակ է, ունի գերապարզ անարժեքի բնություն: Եթե մենք՝ եղական արարածներս, բաղադրված ենք զանազան փարբերից, ապա Աստված ունի անլուծելի, բարի, լավ, անխառն, միապարբ բնություն: Աղամորդիներից նա, ով հաղորդակից է այդ գերապարզ լավին ու բարուն, մոտ է Աստվածությանը¹⁴:

Եւագրի երկերի լուծմունքներ է հեղինակել Գրիգոր վարդապետը 12-րդ դարում: Ըստ Բ. Սարգիսեանի նա հենց Գրիգոր Գ. Վկայասեր Նայրապետն է, սակայն հետագա ուսումնասիրողները առաջ քաշեցին այն կարծիքը, որ հեղինակը Գրիգոր Սկեռացին է:

11-րդ դարում Սարկավագ Վարդապետը նույնպես անդրադարձել է Եւագրի մարտնչությանը: Մ. Մ. № 5596-ում հանդիպում ենք «Դարձեալ Եւագրէն ի բանից սուրբ Վարդապետին Սարկաւագ կոչեաց» գործը: «Նոզմ փորձութեանց որ գան ի վերայ խորան հաւարացելոց -Բրիստոսի, դարձեալ մարդ նմանի խորան փան և պարտիանին, զգայարանը

12 А. Сидоров, Творения Аввы Евагрия, (Аскетические богословские трактаты), Мартис, 1994, ст. 78:

13 Տե՛ս Ն. Թամրազյան, Անանիա Նարեկացի, Երևան, 1986, էջ 236:

14 Տե՛ս Վարդան Արևելցի, Ճառք, Ներբողեանք, աշխատասիր. Ն. Բյուսեյանի, Եր., 2000, էջ 10:

ընդ որ մարանեն փորձությունք իբրեւ զհողմ եւ սիրտ սեղանոյ նմանի, ի խնգոցն խռիականութիւն, արիւթիւն, ողջախռիութիւն եւ արդարութիւն: Դիդիմոս ի մարմնական աչաց կուրացեալ լինի, յայնժամ հոգւոյն աչք եւս առաւել լուսաւորեցաւ»¹⁵: «Գազանք յորժամ վիրավորին ի սրոյ, յայնժամ առաւել զայրանան ի վերայ խոցողացն: Նոյնպէս եւ սաւրանայ յորժամ ի կապար առաքինութեան կամին հասանել մարդիկ ցաւեւ նմա եւ առաւել զայրանա»¹⁶: «Յաճախ յաղաթս կալ արիւնատրս, որ հրամանայ է հասարարեալ: Տէրն ասաց՝ յամենայն ժամ յաղաթս»¹⁷: «Սէր ծաղկէ արդիւնատրականաց, պարդատրի ի հանդերձեալսն»¹⁸:

Ն. Մելլանն իր «Գրիգոր Մարաշեցին եւ նրա սրելծագործությունները» հոդվածում արծարծում է Նեստանց իմաստասերի գրական ժառանգության հարցը¹⁹: Ըստ Բ. Մարգիսյանի՝ Մարաշեցին մեծապէս ազդվել է Եւագրից, ընդհուպ մինչև «ինքնուրոյն ոճով մը խորացուցեր է մասնատրապէս Եւագրի Գ. գիրքը, այն է՝ Ընդդէմ պապասխանի ի գրոց սրբոց, եւ այլն...»: Մենք եւս կարծում ենք, որ երկու հեղինակների երկերում էլ մեղքերից քառապող եւ ինքնամաքրման կարիք ունեցող մարդ արարածի քննությունը կարևորագույն տեղ է զբաղեցնում:

Ամփոփելով պէտք է նկատել, որ այս բազմավաստակ հեղինակի խորհրդապաշարական-ճգնակեցական ուսմունքն իր հասարարուն տեղն ունի հայ մատենագրության մեջ: Այս մասին վկայում է եւագրյան գաղափարների նմանօրինակ ազդեցությունը հայ հեղինակների գործերում, նրա երկերի թարգմանությունները, մեկնությունները, այն փաստը, որ, օրինակ, նրա ամենաարժեքավոր երկը՝ «Նարիւրատրք վեցերորդը» ամբողջությամբ պահպանվել է հայերենով: (Այս ամենը կարոք է ավելի խորը եւ բազմակողմանի ուսումնասիրության):

15 ՄՄ ձեռ. 5596 (XIII դար), թ. 336 բ:

16 Անդ, թ. 337 ա:

17 Անդ, թ. 338 բ:

18 Անդ, թ. 339 բ:

19 «Էջմիածին», Զ, 1960, էջ 36-43: